կոչէր « Պատմութիւն վերադարձի երից վարդապետ « տաց· » ըստ որ մատն ի բերան կացին մնացին յանձնաս ամենայն Հայկազեան ծնունդ, եւ կրկին կրկին ոգեխառնեցան ընդ ձեզ, եւ փարատեցան կենդանագործ կարծիք որ ուրեմն ի բերանս սակառաց :

« Մնացոր՝ որ զանիս զքոյ խրեանց ապաստարեցին ի ձեր Հայրենի խնամս, դովին զրուածոց ընթերցմամբ քանի՝ աւելի ոչ վստահս եղեն. իսկ որ զկողմն ուսինն ճշմարտասիրութեան ձերոյ՝ կեղտակարծ դատմանց ոսանց դիմարանել դովին զրուածովդ հրբպսի ոչ բաջապես խրախուսեն :

« Եւ զինքդ լռեցից, կամ լռեսցեն ամենայն բաջախոնջ, եւ սակայն ինչ զրեսցեն զաւանիս խոստմանս ձերոյ, զի խոստացեալ էիր զԱստուածաբանութեան մատեան մի յօրինել եւ հրատարակել, զոր ցայս վայր մամուլն Մխիթարայ զլանար ի վայելս մատակարարել ուսումնասիրաց ազգիս : Ապա ուրեմն սաբբ եւ նուիրական են պաշտամունք ձեր, եւ արժանի ամենայն գովութեան եւ գոհութեան. երանելիք ձեր, ճ Հարք պատուասիրեալք, անեղծ տպեսցին ի խորս սրտից ամենայն Հանգգնեաց, եւ զոսք որպէս զրաւականեսեցեք՝ դարձեալ զրաւականեսջիք յաւերժ զսիրտ Հայկական որերոյն :

« Ապարեն ի բաղմաց հետեւ ընդեայի զայս զիր յայտարար մտերմութեան իմոյ եւ սկսածութեան առ ձեզ զրել, բայց յուսամ թէ Երիցակից ձեր՝ Դերապատիս Տէր Ամբրոսիոս Վարդապետ՝ ի դարձին իւրում սակառաք զգացոյց. այլ ի դեպ ժամուս, ըբաւեցի այլ եւս անցիք բաղուլ զբտրիս խնձեղ եւ զզգացումն :

« Դերապատիս սրբոց Հարցդ

Մեամ կամաւոր ծառայ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓԱՇԱՆՑՍ ՓԱՓԱՋԵՆԼԻ.

« Ցիւսքիտար, ի Սուրբ Խաչ եկեղեցւոյ, է հուլ. 1836 : »

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՍԵԱՆՆԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԿԵՆԱՑ ԵՒ ԳՈՐԾՈՑ ՄԵԾԱՆՈՒՆ ԿԱՍԱՐՈՒՍԱՑ ԼԱՋԱՐԵԱՆ ՅՈՀՄԻ, շարադրեալ ի Մսերայ Մագիստրոսէ եւ Ասպետէ Գրիգորեան Մսերեանց. միահատոր ութածալ մեծ, տպագրեալ ի Մոսկուա, 1836 : — Լազարեանց հոյակապ ազգատոմին վրայ թէպետ մասեր գրուածքներ շատ եղած էին մինչեւ հիմա, բայց սասր չափ ընդարձակութիւն եւ ամբողջութիւն ունեցող պատմութիւն մը դեռ չկար հայերէն : Պ. Մսերեանց վարժապետը այս աշխատութիւնը յանձն առեր ու կատարեր է յաջողակ եւ վայելուչ ոճով, եւ մաքուր պատկերազարդ տպագրութեամբ : Պատմութեանս ետեւեն դրուած են Լազարեանց ճեմարանին վերաբերեալ զանազան տեղեկութիւններ, հրամանագրեր ու հրովարտակներ, այլեւայլ գրքերէ քաղած հատուածներ, եւ քսանբվեց կտոր գովեստ՝ արձակ եւ ոտանաւոր, որոց մէջ լաւագոյններն են վերջի եօթը հատը, որ ցիշատակարանը գրող դի շարադրածն են :

ՆՈՐ ԲԵԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ, երեք տետրակք զանազան ռամկական երգոց երից նոր բանաստեղծից. այսինքն Ադամ Ազրարի (որ մենք ալ ուրիշներուն հետ միեղեւ հիմա Ադամ Աղրար գիտենք), Աշրզ Շիրիեի, եւ Նիրաեի բանաստեղծին : — Այս երգերուն վրայ ուրիշ անգամ ամսագրոյս մէջ կը խօսինք. առ այժմ պարտք կրճանչնանք մեզի գովութեամբ յիշատակել զանոնք հաւաքող, պարզաբանող ու տպագրող ուսումնասիրին անունը, որ է Պարոն Ոսկան Յովհաննիսեանց Երեւանցի:

Propriétaire-gérant : A. LACHAT.

Ի ՓԱՐԻԶ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ՎԱԼՏԵՐԻ.

PARIS. — IMPRIMERIE WALDER, RUE BONAPARTE, 44.